

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 6

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2021-2022 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

06 մայիսի 2022թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 19–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի կրթական ծրագրերի ղեկավարների հաստատման հարցը: Ջեկուցող՝ Ս. Վարդապետյան
2. Ընթացիկ հարցեր:
 - 2.1. Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը: Ջեկուցող՝ Տ. Սարգսյան

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի կրթական ծրագրերի ղեկավարների հաստատման հարցը:

Հստեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ինստիտուտի կրթական ծրագրերի ղեկավարները պետք է հաստատվեն գիտական խորհրդի կողմից: Նա նշեց, որ Ֆարմացիայի ինստիտուտի կրթական

ծրագրերն են՝ «Ֆարմացիա» (առկա բակալավրիատ և մագիստրատուրա), «Դեղերի որակի վերահսկում» (մագիստրատուրա) և «Դեղագործական քիմիա» (հեռակա բակալավրիատ): Ս. Վարդապետյանը մանրամասն ներկայացրեց կրթական ծրագրերի ղեկավարներին ներկայացվող գործառույթները: Նա հիշեցրեց, որ մինչ օրս Ֆարմացիայի ինստիտուտի կողմից սպասարկվող կրթական ծրագրերի ղեկավարներն են ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը և Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանը: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Ա. Մկրտչյանը, Ս. Ափոյանը, Էմմա Մարկոսյանը, ովքեր առաջարկեցին «Ֆարմացիա» (առկա բակալավրիատ) և «Դեղերի որակի վերահսկում» (մագիստրատուրա) կրթական ծրագրերի ղեկավար հաստատել Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ Հայարփի Սիմոնյանին, «Ֆարմացիա» (մագիստրատուրա) կրթական ծրագրի ղեկավար՝ Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Անահիտ Հովհաննիսյանին և «Դեղագործական քիմիա» (հեռակա բակալավրիատ) կրթական ծրագրերի ղեկավար՝ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն Արփինե Գեոլջանյանին:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել.

1. Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանին՝ «Ֆարմացիա» (առկա բակալավրիատ), «Դեղերի որակի վերահսկում» (մագիստրատուրա) կրթական ծրագրերի ղեկավար:
2. Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանին՝ «Ֆարմացիա» (մագիստրատուրա) կրթական ծրագրի ղեկավար:
3. Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն ք.գ.թ., դոցենտ Արփինե Գեոլջանյանին՝ «Դեղագործական քիմիա» (հեռակա բակալավրիատ) կրթական ծրագրի ղեկավար:

2. Ընթացիկ հարցեր:

Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ, Կենսաբժշկագիտության ամբիոնի ասիստենտ ք.գ.թ.

Տաթևիկ Սարգսյանին, ով հաղորդեց, որ ավարտական աշխատանքների թեմաները և գիտական ղեկավարները պետք է հաստատվեն գիտական խորհրդի կողմից: Այդ նպատակով հանձնաժողովը հավաքագրել է ինստիտուտի 3 ամբիոններում իրականացվող ավարտական աշխատանքների վերնագրերը և ղեկավարների ցուցակը: Ելույթ ունեցան նաև Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, Ֆարմքիմիայի ամբիոնի վարիչ Հ. Միմոնյանը, ովքեր նշեցին, որ ավարտական աշխատանքներն ընթանում են ըստ ժամանակացույցի, թեմաները քննարկվել և հաստատվել են ամբիոններում:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների ներկայացված ցանկը:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ., դոցենտ

Ս. Վարդապետյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ. , դոցենտ

Ա. Դադայան